ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՁԵՎԸ

Մ. Գ. ՎԱՍԻԼՅԱՆ

ՍՄԿԿ XXIV համագումարն ընդգծեց, որ նոր հնգամյակի գլխավոր խնդիրը սոցիալիստական արտադրության զարգացման արագ տեմպերի, նրա արդյունավետության բարձրացման հիման վրա ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի զգալի վերելքի ապահովումն է։ Այդ կարևորագույն խնդրի լուծման համար մի շարք գործոնների հետ միասին առաջին պլան են մղվում տնտեսության կառավարման համակարգի կատարելագործման հարցերը։

Արտադրության կառավարման բարելավումն առանձնապես հրատապ է այն պատճառով, որ մեր երկրի էկոնոմիկայի աճի և նրանում տեղի ունեցող որակական տեղաշարժերի շնորհիվ այժմ ավելի ու ավելի է մեծանում արտադրության կառավարման դերը, առաջնակարգ նշանակություն է ստանում նրա գիտականորեն հիմնավորված կազմակերպումը։

Արդյունաբերական արտադրությունը և նրա կառավարումն ու կազմակերպումը կատարելագործելու ուղիներից մեկը վերջին ժամանակներս դարձել է ճյուղային արտադրական միավորումների ստեղծումը։ «Արտադրական միավորումների ստեղծումը,— նշեց Ա. Ն. Կոսիգինը կուսակցության XXIV համագումարում,— կառավարման սիստեմի կատարելագործման նոր, կարևոր տարր է։ Միավորումների զարգացումը հնարավորություն կտա ավելի լրիվ չափով իրացնել տնտեսական ռեֆորմի հնարավորությունները, արագացնել գիտատեխնիկական առաջադիմությունը»[1]*։*

Մեր երկրում առաջին արտադրական միավորումները ծագեցին վաթսունական թվականների սկզբներին և շուտով ընդգրկեցին արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը։

ՍՍՀՄ-ում արտադրական միավորումների կազմակերպումն առանձնապես մեծ թափ ստացավ տնտեսական ռեֆորմի շրջանում։ Արդեն 1972 թ. գործում էին ավելի քան 879 միավորում[2]*։*

Երկրի առաջավոր արտադրական միավորումների օրինակով մեր հանրապետության էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, թեթև և սննդի արդյունաբերության մեջ ստեղծվեցին 10 միավորում, որոնցից են «Հայէլեկտրալույս», «Հայէլեկտրաշարժիչ», «Քիմմեքշին», «Մասիս», «Հայգորգ» և այլն։

Արտադրական միավորումների դերն ու նշանակությունը նախ այն է, որ դրանց կազմակերպումը սերտորեն կապված է հանրային արտադրության կազմակերպման առաջադիմական ձևերի և, առաջին հերթին, համակենտրոնաց-

---

1 *ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը, Երևան, 1971, էջ 226։*

2 „Политическое самообразование", 1972, № 11, стр. 75.

ման հետ։ Դա անհրաժեշտ պայմաններ է ստեղծում հանրային արտադրության արդյունավետության բարձրացման համար։

«Արդյունաբերական ձեռնարկությունների չափերի աճումը,— նշել է Կ. Մարքսը,— ամենուրեք ելակետ է ծառայում շատերի համատեղ աշխատանքի ավելի լայն կազմակերպման համար, նրա նյութական շարժիչ ուժերի ավելի լայն զարգացման համար, այսինքն՝ այն բանի համար, որ արտադրության բաժան-բաժան ու հնավանդ պրոցեսները ավելի ու ավելի ուժեղ թափով փոխարկվեն արտադրության հասարակականորեն կոմբինացված ու դիտականորեն ղեկավարվող պրոցեսների»[3]։

Մեր երկրում դեռևս կան բազմաթիվ չմասնագիտացված մանր ձեռնարկություններ, որոնք ունեն վարչական խոշոր ապարատ և անարդյունավետ օժանդակ տնտեսություն։ Դրանց արտադրանքը մեծ մասամբ ավելի թանկ է նստում, քան խոշոր, մասնագիտացված ձեռնարկություններինը։ Մանր ձեռնարկություններն ի վիճակի չեն բարձր մակարդակով լուծել տեխնիկական առաջընթացի հարցերը, ուսումնասիրել և կանխագծել ժողովրդական տնտեսության պահանջարկն իրենց արտադրանքի նկատմամբ, ներգործել մատակարարների վրա։ Այդ ձեռնարկությունների մեծ քանակի պատճառով կապիտալ ներդրումները փոշիանում են, առաջանում է ֆինանսական ռեսուրսների պակաս, խախտվում է տնտեսական կապերի կոորդինացիան և այլն։ Մանր ձեռնարկություններից յուրաքանչյուրը թողարկում է տարատեսակ արտադրանք և ունի մեծաթիվ տարասեռ տեխնոլոգիական պրոցեսներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում արմատավորել և արդյունավետ օգտագործել նորագույն տեխնիկա, տեխնոլոգիա և արտադրության կազմակերպման առաջադիմական ձևեր։

Արտադրական միավորումները մեծ մասամբ ստեղծվում են նույնատիպ արտադրանք թողարկող մանր և միջակ ձեռնարկությունները գլխադաս ձեռնարկության շուրջը կենտրոնացնելու միջոցով։ Արտադրական միավորումներն արդարացնում են միայն իրենց ձեռնարկությունների (մասնաճյուղերի) արտադրա-տեխնիկական միասնության դեպքում, որը հետզհետե լրացվում է նաև նրանց կազմակերպական և տնտեսական միասնությամբ։ Միավորումներում կենտրոնացվում են նաև նյութատեխնիկական, ֆինանսական, աշխատանքային ռեսուրսները և նրանց կազմի մեջ մտնող ձեռնարկությունների մի շարք կարևոր արտադրատնտեսական ֆունկցիաներ։ Դա հնարավորություն է տալիս արդյունավետ օգտագործել արտադրության միջոցները և աշխատուժը, կրճատել հումքի, նյութերի պաշարները, արագացնել տեխնիկական առաջադիմությունը, լավագույն ձևով կազմակերպել պահանջարկի ուսումնասիրությունն ու կանխագծումը։

Միավորումը հանդես է գալիս որպես սոցիալիստական արտադրության համակենտրոնացման ձև, որի նպատակն է ստեղծել խոշոր արտադրական համալիր՝ ձեռնարկությունների կազմակերպական և տնտեսական միավորման միջոցով։

Տնտեսավարման նոր պայմաններում միավորումները նպաստում են արդյունաբերության կառավարման ճյուղային և տերիտորիալ սկզբունքների զուգակցմանը։

---

3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 658։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1965) պլենումում հատուկ ընդգծվեց, որ ճյուղային և տերիտորիալ կառավարման սկզբունքները կարող են հաջող զուգակցվել, եթե նորաստեղծ մինիստրություններն իրենց գործունեության մեջ հենվեն տնտհաշվարկային միավորումների վրա, նրանց հանձնելով մի շարք օպերատիվ ֆունկցիաներ։ Այդ առումով միավորումների ստեղծումը բխում է արդյունաբերության տվյալ ճյուղի և վարչական կամ տնտեսական շրջանների զարգացման շահերի զուգակցման անհրաժեշտությունից։ Քանի որ յուրաքանչյուր ձեռնարկություն արդյունաբերության որոշակի ճյուղի բաղկացուցիչ և արտադրական տերիտորիալ համալիրի օրգանական մասն է, այդպիսի զուգակցումը դառնում է ձեռնարկությունների զարգացման կարևոր պայմաններից մեկը։

Սովորաբար արտադրական միավորումներն ընդգրկում են վարչական կամ տնտեսական շրջանի, իսկ երբեմն Միության մասշտաբով մեկ ճյուղի (ենթաճյուղի) բոլոր ձեռնարկությունները կամ դրանց մեծամասնությունը և տվյալ տերիտորիայում հանդես են գալիս որպես միատիպ արտադրանքի հիմնական արտադրողներ։

Միավորումների ստեղծումը հնարավորություն է տալիս որոշել արտադրության զարգացման հեռանկարները՝ հաշվի առնելով արդյունաբերության տվյալ ճյուղի և տնտեսական տվյալ շրջանի շահերը։ Այստեղից հետևում է, որ արտադրական միավորման դերն անհամեմատ մեծ է, քան առանձին, թեկուզ խոշոր ձեռնարկության դերը։ Ի տարբերություն ձեռնարկության, միավորումը ռեալ պատասխանատվություն է կրում ոչ միայն որոշակի արտադրանքի արտադրության, այլև ճյուղի (ենթաճյուղի) միասնական տեխնիկական քաղաքականության, տեխնիկական զարգացման, արտադրության կազմակերպման, տեխնոլոգիայի կատարելագործման և արտադրանքի իրացման համար։ Արտադրական միավորումների կազմակերպումը պարտադիր կերպով չպետք է ուղեկցվի տվյալ տերիտորիայում գտնվող նույնատիպ արտադրանք թողարկող բոլոր ձեռնարկությունների միավորումով, այլ պետք է հաշվի առնվեն միավորումների օպտիմալ չափերը։ Բացառված չէ, որ տվյալ տնտեսական շրջանում կարող են ստեղծվել մեկ ճյուղի երկու կամ ավելի արտադրական միավորումներ՝ աշխատանքի նպատակահարմար բաժանմամբ։ Միասնական տերիտորիալ-ճյուղային համալիրը հնարավորություն է տալիս որոշել ձեռնարկությունների օպտիմալ չափերը, օգտագործել խոշոր արտադրության առավելությունները, բարձրացնել մանր ու միջակ ձեռնարկությունների մասնագիտացման մակարդակը։ Որպես կանոն, միավորումների ստեղծումն ուղեկցվում է ընդգրկված ձեռնարկությունների մասնագիտացմամբ և կոոպերացմամբ։ Նույնատիպ արտադրանքի թողարկումը կամ տեխնոլոգիապես համանման օպերացիաների կատարումը կենտրոնացվում և մասնագիտացվում է համալիրի այն ձեռնարկություններում, որոնք համապատասխանում են այդ արտադրանքի պրոֆիլին և լավագույն պայմաններ ունեն դրա համար։ Միավորման կազմի մեջ մտնող ձեռնարկությունները, արտադրամասերը և այլ օղակները ազատվում են ոչ անհրաժեշտ արտադրատեսակների արտադրությունից, վերանում է կրկնորդումը նրանց աշխատանքում։ Դրա հետևանքով համալիրի մասշտաբով արտադրանքի անվանացանկը մնում է նույնը, իսկ յուրաքանչյուր օղակում արտադրատեսակների քանակը և օպերացիաների բազմազանությունը զգալիորեն նվազում է։ Յուրաքանչյուր օղակ մասնագիտանում է առանձին

հանգույցների, դետալների թողարկման, պատրաստի արտադրանքի հավաքման կամ որոշակի տեխնոլոգիական օպերացիաների կատարման ասպարեզում։

Միավորումների ստեղծմամբ նաև իրականացվում է օժանդակ և նախապատրաստական արտադրության կենտրոնացում։ Ստեղծվում են կենտրոնացված և միասնական օժանդակ ու նախապատրաստական արտադրամասեր, որոնք հարմարեցվում են համալիրի բոլոր ստորաբաժանումների սպասարկմանը։ Դա հնարավորություն է տալիս շեշտակիորեն բարձրացնել մեքենայացման աստիճանը և արմատավորել արտադրության կազմակերպման առաջադիմական ձևեր։

Փորձը ցույց է տալիս, որ արտադրական միավորումներում տնտեսական արդյունավետությունը ձեռք է բերվում հիմնականում արտադրության խոր մասնագիտացման միջոցով։ Այդ տեսակետից հատկանշական է կոշիկի «Մասիս» ֆիրմայի փորձը։ Մինչև նրա կազմակերպումը (1963), մեր հանրապետության ժողտնտխորհի ենթակայության տակ գործում էին կոշիկի 12 ֆաբրիկա, որոնք, թեև գտնվում էին միևնույն գերատեսչական ենթակայության տակ և տեղաբաշխված էին իրարից ոչ հեռու, այնուամենայնիվ ոչ միայն դետալային, այլև առարկայական մասնագիտացման չէին ենթարկված։ Կոշիկի ֆաբրիկաների մեծ մասը զուգահեռաբար թողարկում էր նույն արտադրանքը, իսկ յուրաքանչյուր ֆաբրիկա իր հերթին արտադրում էր բազմատեսակ կոշիկներ։ Միավորման ստեղծումից հետո, կրկնորդումը վերացնելու նպատակով ֆաբրիկաների միջև կատարվել է արտադրանքի անվանացանկի վերաբաշխում, որը հնարավորություն է տվել յուրաքանչյուր ֆաբրիկա մասնագիտացնել կոշիկի որոշակի տեսակի արտադրության գծով, միավորման մասշտաբով ընդլայնել կոշիկի ասորտիմենտը, բարձրացնել արտադրանքի որակը, կենտրոնացնել կոշտ կաշվի կտրումը, պահեստամասերի պատրաստումը, հիմնական նորոգումը և օժանդակ նյութերի մատակարարումը։

Մինչև ֆիրմայի կազմակերպումը կոշիկի ֆաբրիկաներն աշխատել են վնասով, իսկ այժմ դարձել են շահութաբեր։ Անցած 8 տարիների ընթացքում «Մասիս» ֆիրմայում ապրանքային արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսերը կրճատվել են մոտ 6 կոպեկով։ Միայն կոշտ կաշվի կենտրոնացված ձեվումից ստացված տարեկան պայմանական խնայողությունը կազմել է 200 հազար ռուբլի[4]։ Համեմատելի արտադրանքի ինքնարժեքը ֆիրմայում 2,5—3 անգամ ցածր է, քան հանրապետության կոշիկի արտադրության չմիավորված օբյեկտներում։ Դրանցում վարչակառավարչական և արտադրական ծախսերի տեսակարար կշիռն ապրանքային արտադրանքի 1 ռուբլուն ընկնող ծախսերում 2,5—3 անգամ բարձր է, քան «Մասիս» ֆիրմայում։ Աշխատանքի արտադրողականությունը «Մասիսում» 5—7 անգամ գերազանցում է այդ ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականությունը։ Ֆիրմայում գործարկվել է 28 հոսքային գիծ՝ 1800 մ ընդհանուր երկարությամբ։ Ներկայումս «Մասիս» ֆիրմայում կոշկեղենի ավելի քան 95%-ը թողարկվում է հոսքային մեթոդով[5]։

Գիտատեխնիկական առաջադիմության արագացման բնագավառում նույն-

---

4 Վ. Ղազանչյան, Վ. Պետրոսյան, Տնտեսական ռեֆորմը գործողության մեջ, Երևան, 1969, էջ 71։

5 Ըստ «Մասիս» ֆիրմայի տարեկան հաշվետվությունների։

պես մեծ է միավորումների դերը։ Առանձին ձեռնարկությունների համակարգն արգելակում է տեխնիկական առաջընթացը, ժողովրդական տնտեսության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների և կոնստրուկտորական մշակումների արագ ներդրումը։ Միավորումների ընձեռած առավելությունները հնարավորություն են տալիս նախկինում ցրված, միմյանցից անջատված գիտահետազոտական, նախագծային, կոնստրուկտորական կազմակերպությունները, լաբորատորիաները, իսկ որոշ դեպքերում նաև գործարկման-կարգավորման և մոնտաժման կազմակերպությունները կենտրոնացնել միասնական արտադրատնտեսական համալիրում։ Այդ պայմաններում գիտական հետազոտությունների ասպարեզում, նախագծման, կոնստրուկտորավորման, նոր արտադրանքի փորձարկման և արտադրության տեխնոլոգիայի մշակման աշխատանքներում ձեռք է բերվում լիակատար համաձայնություն, համաժամանակություն և գիտատեխնիկական խնդիրների համալիրային լուծում։ Դա թույլ է տալիս վերացնել նոր տեխնիկայի մշակման, յուրացման և ներդրման յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելու ժամանակի կորուստները և կատարվող մշակումների հնանալու գործոնները։ Հետազոտությունները և մշակումները կատարվում են ելնելով ձեռնարկությունների կոնկրետ պայմաններից, որի հետևանքով վերանում է նաև ընդհանուր նախագծային և կոնստրուկտորական լուծումներն այդ պայմաններին հարմարեցնելու լրացուցիչ աշխատանքի անհրաժեշտությունը։

Այդ բնագավառում միավորումների առավելությունը դրսևորվում է նաև նրանով, որ դրանք ունեն ֆինանսական խոշոր միջոցներ, հատուկ կենտրոնացված ֆոնդեր ու ռեզերվներ, որոնք օգտագործվում են որպես նոր տեխնիկայի ներդրման և յուրացման ծախսերի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ։

Ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը թույլ է տալիս արագացնել արտադրության վերակառուցումը, ժամանակին ձեռք բերել մասնագիտացված սարքավորում, մեքենայացման միջոցներ և բարձրացնել ձեռնարկությունների ու գիտահետազոտական կազմակերպությունների շահագրգռվածությունը գիտատեխնիկական առաջադիմության միջոցառումների իրականացման բնագավառում։

Միավորումների այն գիտատեխնիկական կազմակերպությունները, որոնք իրենց տրամադրության տակ ունեն անհրաժեշտ բոլոր պայմանները, ի վիճակի են լուծելու գիտատեխնիկական առաջադիմության լուրջ հարցեր։ Այսպես, «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման լույսի աղբյուրների և լուսատեխնիկական իրերի հատուկ կոնստրուկտորական բյուրոն մեծ հաջողությունների է հասել նոր արտադրանքի ստեղծման, որակի բարձրացման բնագավառում։ Եթե մինչև միավորման ստեղծումը լյումինեսցենտային լամպերի այրման միջին տևողությունը 5000 ժամ էր, ապա այժմ կրկնապատկվել է՝ հասնելով 10000 ժամի։ Ներկայումս ավտոմոբիլային լամպերի ծառայության ժամկետը մեծացել է 50%-ով, իսկ լյումինեսցենտային լամպերի պարպիչներինը՝ 4 անգամ։

1971 թ. միավորման թողարկած 36 տեսակի լուսատուներից 34-ին ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության ատեստացիոն հանձնաժողովը ար-

ժանացրել է բարձր կարգի[6]։ Լույսի աղբյուրների և լուսատեխնիկական իրերի որակի բարձրացումից ժողովրդական տնտեսության ստացած օգուտը անցյալ հնգամյակում կազմեց ավելի քան 5 միլիոն ռուբլի։

Երևանի լուսատեխնիկական գործարանին միավորման ստեղծումը հնարավորություն տվեց վերակառուցվել և փոխարկվել փորձական արտադրության։ Այն ունի հզոր կոնստրուկտորական-տեխնոլոգիական ծառայություն, որը հնարավորություններ է սաեղծում թողարկվող արտադրանքի կատարելագործման, նոր արտադրանքի մշակման, արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների ներդրման համար։ «Հայէլեկտրալույս» միավորումում գիտահետազոտական և փորձնակոնստրուկտորական աշխատանքների գծով մշակվել է 56 թեմա[7]։ Անցյալ հնգամյակում միավորումը զգալի հաջողություններ է հասել նաև նոր տեխնիկայի ներդրման, յուրացման, օգտագործման և աշխատանքի գիտական կազմակերպման ասպարեզում։ Արմատավորվել է 443 միջոցառում, որոնց տարեկան պայմանական օգուտը կազմում է 1 միլիոն 217 հազար ռուբլի[8]։

Արտադրական միավորումների նշանակությունն առանձնապես կարևոր է տնտեսական ռեֆորմի իրականացման շրջանում։ Ռեֆորմը զգալիորեն ընդլայնեց ձեռնարկությունների ինքնուրույնությունը, պայմաններ ստեղծեց արդյունաբերական արտադրության պլանավորումը կատարելագործելու, տնտեսական խթանումն ուժեղացնելու համար։ Սակայն ռեֆորմի իրականացման ընթացքում պարզվեց, որ բազմաթիվ ձեռնարկություններ ի վիճակի չեն լուծելու մի շարք կարևորագույն տնտեսական հարցեր։ Հաճախ մանր և միջակ ձեռնարկությունները չեն կարողանում ռացիոնալ օգտագործել տնտեսական խթանման ֆոնդերը և հատկապես արտադրության զարգացման ֆոնդը, որը կոչված է ապահովել արտադրության ընդլայնումը և հիմնական ֆոնդերի նորացումը։ Սակայն մանր ձեռնարկություններում այդ ֆոնդի չափը սովորաբար այնքան աննշան է, որ հնարավորություն չի տալիս կատարել այդ խնդիրը, մանավանդ, այն իրացնել բնեղեն արտահայտությամբ։ Բավական է նշել, որ 1969 թ. երկրի արդյունաբերության մեջ ծախսվել է այդ ֆոնդի միայն 78,3%-ը[9]։

Տնտեսական ռեֆորմի սկզբունքներն ավելի հետևողականորեն են իրականացվում խոշոր ձեռնարկություններում և միավորումներում։ Փորձը ցույց է տալիս, որ խոշոր արտադրական միավորումներում ավելի մեծ հաջողությամբ է իրացվում ռեֆորմի գլխավոր սկզբունքը՝ կենտրոնացված պլանային ղեկավարման և ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության զուգակցումը։ Միավորման մեջ ձեռնարկությունների պլանավորումը իրականացնում է տնտհաշվարկային մարմինը, որի կազմի մեջ են մտնում այդ ձեռնարկությունները։ Դա պլանավորումը կատարելագործելու, հիմնավորելու և պետության ու ձեռնարկությունների տնտհաշվարկային շահերն առավելագույն չափով պահպանելու կարևորագույն գործոն է։

Տնտհաշվարկի ընդլայնման և խորացման խնդիրը միավորումներում ավելի արդյունավետ է լուծվում։ Անցումը միավորումներին հնարավորություն

---

6 «Սովետական Հայաստան», 13. IX. 1972։

7 „Коммунист", 15. I. 1972.

8 Նույն տեղում։

9 „Народное хозяйство СССР в 1969 г.", М., 1970, стр. 766.

է տալիս բարձրացնել տնտհաշվարկի դործնականությունը, այն դարձնել արդյունաբերության բոլոր օղակներն ընդդրկող միասնական համակարգ։ Միավորումներում հնարավոր է անցնել բոլոր ծախսերի, այդ թվում կապիտալ ներդրումների լրիվ ինքնահատուցման, հրաժարվել բյուջետային ֆինանսավորումից կամ դդալիորեն կրճատել նրա չափերը։ Դա հնարավորություն կտա բարձրացնել կապիտալ ներդրումների արդյունավետությունը, արագացնել հիմնական ֆոնդերի գործարկումը, նախագծային կարողությունների յուրացումը և այդ նպատակով մոբիլիզացնել սեփական միջոցները։ Ավելին, միավորման տրամադրության տակ կարող են լինել ոչ միայն տնտեսական խթանման խոշոր ֆոնդեր, այլև ուրիշ ռեսուրսներ՝ միավորման կազմի մեջ մտնող ձեռնարկությունների հաշվարկային շահույթի հաշվին տնտեսական կարգավորման կենտրոնացված ֆոնդեր և ռեզերվներ ստեղծելու միջոցով ընդլայնված վերարտադրություն իրականացնելու համար։

Արտադրական միավորումների կազմակերպումը բարձրացնում է ձեռնարկությունների ղեկավարման արդյունավետությունը և հնարավորություն տալիս խոշորացնել կենտրոնացված կառավարման ենթակա օբյեկտները։ Դա համապատասխան մինիստրություններին հնարավորություն է տալիս բազմաթիվ օպերատիվ ֆունկցիաներ հանձնել միավորումներին և ուշադրությունը հիմնականում բևեռել այս կամ այն ճյուղի տեխնիկական առաջընթացի, էկոնոմիկայի հրատապ խնդիրների ու նրա հեռանկարային զարգացման արմատական հարցերի լուծման վրա։ Բացի այդ, միավորումների ստեղծմամբ վերանում է ձեռնարկությունների կառավարման միջանկյալ օղակների՝ գլխավոր վարչությունների անհրաժեշտությունը և հնարավորություն է ստեղծվում արտադրական միավորումներն անմիջականորեն ենթարկել մինիստրություններին ու անցնել կառավարման երկօղակ (մինիստրություն-միավորում) սիստեմի։ Արտադրական միավորումներում ստեղծվում են և արդյունավետ օգտագործվում կառավարման ավտոմատացված սիստեմներ (ԿԱՍ), որոնք խարբսխվում են կիբեռնետիկ սկզբունքների, տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելների ու էլեկտրոնային հաշվողական մեքենաների կիրառման վրա։

Ընթացիկ հնգամյակում մեծ աշխատանք է կատարվելու ԿԱՍ-ի պլանային ներդրման համար։ Հաշվարկված է, որ դրանց ներդրումը հնարավորություն կտա միջին հաշվով 5—10%-ով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել արտադրանքի ինքնարժեքը, կրճատել նյութերի և կոմպլեքտավորված շինվածքների պաշարները[10]։ Առանձին ձեռնարկություններում, առավել ևս մանրերում, ԿԱՍ-ի ստեղծումը արդյունավետ է, իսկ միավորումներում՝ կենսականորեն անհրաժեշտ, տնտեսապես արդյունավետ։ Դրանցում ԿԱՍ-ի կիրառումը նպաստում է արտադրական և տնտեսական պրոցեսների օպերատիվ կոորդինացմանը, համալիրի տարբեր մասերի միջև օպտիմալ կապերի մեխանիզմի հաստատմանը։

Թողարկվող արտադրանքի նկատմամբ ժողովրդական տնտեսության պահանջների, շուկայի կոնյունկտուրայի ուսումնասիրության կազմակերպման, սպառողների և մատակարարների հետ ուղղակի կապեր հաստատելու համար արտադրական միավորումները մեծ հնարավորություններ ունեն։ Դա առանձնապես կարևոր է տնտեսվարման նոր պայմաններում, երբ կրճատվում է

---

[10] „Правда", 18. XII. 1971.

արտադրանքի կենտրոնացված կարգով պլանավորվող անվանացանկը և ձեռնարկությունների ու միավորումների տնտեսական գործունեության կարևորագույն ցուցանիշներից մեկը դառնում է արտադրանքի իրացման ծավալը։

Միավորումների ստեղծումը նպաստում է նաև երկրի խոշոր, միջակ և փոքր քաղաքների աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը։ Հայտնի է, որ մեր երկրի մի շարք խոշոր արդյունաբերական կենտրոններում գոյություն ունի որակյալ կադրերի և բանուժի անբավարարություն այն դեպքում, երբ մանր և միջակ քաղաքների արդյունաբերության զարգացման մակարդակը հաճախ թույլ չի տալիս արդյունավետ օգտագործել նրանց աշխատանքային ռեսուրսները։ Միավորումները հնարավորություն ունեն հաշվի առնել կոնկրետ պայմանները, լավագույն ձևով պլանավորել դրանց զարգացումը և դրանով իսկ նպաստել աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը։ Այսպես, «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման ստեղծումը, որի կազմում բացի Երևանի էլեկտրալամպերի (գլխադաս) և լուսատեխնիկական գործարաններից մտան նաև հանրապետության փոքր քաղաքների և շրջանների՝ Կիրովականի, Ղափանի, Սիսիանի, Մարալիկի, Մարտունիի և Գագարինավանի առկա, բայց չօգտագործվող արտադրական հրապարակների բազայի վրա ստեղծված մասնաճյուղերը, նպաստեց աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը և արդյունաբերության տեղաբաշխմանը, դեպի քաղաքները գյուղական բնակչության միգրացիայի կասեցմանը և այլն։

Փորձը ցույց է տալիս, որ միավորումները լայն հնարավորություններ են ստեղծում տեխնիկատնտեսական ցուցանիշների աճի կայուն տեմպեր ձեռք բերելու համար։ Արտադրության կազմակերպման և կառավարման այդ առաջադիմական ձևի արդյունավետության մասին են վկայում նաև 8-րդ հնգամյակում մեր հանրապետության արտադրական միավորումների ձեռք բերած տեխնիկատնտեսական ցուցանիշները։ «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման արտադրանքի տարեկան միջին աճը կազմել է 27,7, իսկ իրացման աճը՝ 29,7%։ Անցյալ հնգամյակում արտադրանքի ծավալն ավելացել է 3,7 անգամ, ըստ որում՝ դրա 75%-ը ձեռք է բերվել աշխատանքի արտադրողականությունը 2,2 անգամ բարձրացնելու շնորհիվ։ Միավորման մեջ կենտրոնացվել են արտադրության պլանավորումը, հաշվառումը, իրացումը և մատակարարումը, կապիտալ շինարարությունը, միասնական տեխնիկական քաղաքականության իրականացումն ու արտադրության նախապատրաստումը։ Դա նշանակալի չափով նպաստեց արտադրության արդյունավետության բարձրացմանը։ Այսպես օրինակ, միավորման ապրանքային արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսերը 8-րդ հնգամյակում կրճատվել են 24%-ով, իսկ ֆոնդահատույցն ավելացել է 2,5 անգամ։ Հիմնական ֆոնդերի մեկ ռուբլուն ընկնող արտադրանքի թողարկումը աճել է ավելի քան 2, շահույթի գումարը՝ 20, իսկ հաշվարկային շահութաբերության մակարդակը՝ 4,6 անգամ[11]։

Ստ. Շահումյանի անվան կաշվի արտադրական միավորումն անցած հինգամյակում թողարկեց 3,2 միլիոն ռուբլու լրացուցիչ արտադրանք, իսկ պլանից դուրս խնայված հումքի հաշվին՝ 5 միլիոն քառակուսի դեցիմետր կաշի։ Աշխա-

---

11 Տե՛ս «Հայէլեկտրալույս» միավորման տարեկան հաշվետվությունները։

տանքի արտադրողականությունը բարձրացավ 34%-ով, իսկ շահութաբերությունն ավելացավ 2 անգամ[12]։

Երևանի տրիկոտաժի արդյունաբերության տնտեսական արտադրական միավորման 1967—1970 թթ. գործունեության ընթացքում արտադրանքի թողարկումն ավելացել է 45, շահույթի գումարը՝ 70, աշխատանքի արտադրողականությունը՝ 28, իսկ միջին աշխատավարձը՝ 11%-ով։ Արտադրության արդյունավետության բարձրացումը հիմնականում ձեռնարկությունների մասնագիտացման, կոոպերացման, նոր տեխնիկայի ներդրման և ֆաբրիկաներին ցույց տված արդյունավետ օգնության արդյունքն է։

Մեր հանրապետությունում նպատակահարմար է տնտեսական միավորումներ ստեղծել միութենական-հանրապետական ենթակայության նաև այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան, կաթի, մսի, սննդի և շինանյութերի արդյունաբերությունը՝ հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները։ Դրանց ստեղծման լայն հնարավորություններ կան նաև հանրապետության կենցաղային սպասարկման և տեղական արդյունաբերության մեջ։ «Միավորումներ և կոմբինատներ ստեղծելու կուրսը,— նշել է Լ. Ի. Բրեժնևը Կուսակցության XXIV համագումարում,—պետք է վարել ավելի վճռականորեն. հեռանկարային առումով դրանք կդառնան հանրային արտադրության հիմնական տնտեսական օղակները»[13]։

ПРОГРЕССИВНАЯ ФОРМА ОРГАНИЗАЦИИ И УПРАВЛЕНИЯ ПРОИЗВОДСТВОМ

М. Г. ВАСИЛЯН

Резюме

Как было отмечено на XXIV съезде КПСС, одним из узловых вопросов экономической политики партии является совершенствование системы управления.

На современном этапе один из путей практического решения этой важнейшей задачи — создание производственных объединений в промышленности.

Первые производственные объединения в нашей стране возникли в начале шестидесятых годов и вскоре охватили почти все отрасли промышленности.

Организация производственных объединений в СССР получила особый размах в период экономической реформы. Уже в 1972 г. действовало свыше 879 объединений.

На примере передовых производственных объединений страны в электротехнической, электронной, легкой и пищевой промышленности Армянской ССР было создано 10 объединений, в их числе «Армэлектросвет», «Армэлектродвигатель», «Химмашстрой», «Масис», «Айгорг» и другие.

---

12 «Սովետական Հայաստան», 13. II. 1971։

13 ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը, Երևան, 1971, էջ 90։

Материальная база и необходимость создания производственных объединений — концентрация большого количества мелких предприятий в промышленности.

Создание объединений повышает уровень концентрации, специализации и кооперирования производства. Они способствуют сочетанию принципов отраслевого и территориального управления промышленностью, ускорению научно-технического прогресса, внедрению полного хозрасчета, автоматизированных систем управления и т. д. Об этом свидетельствует опыт производственных объединений «Армэлектросвет», «Армэлектродвигатель», «Масис», добившихся высоких производственно-хозяйственных успехов.